

ԱԶԲԻ ՎԵՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Ժամանակէ մը ի վեր, Ամենապատիւ Տ. եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէքեան, բարեխնամ Պատրիարք Ս. Սթոռոյս, կը տառապէք աչքի տեսողութեան նուազումէ, հետեւանք՝ cataract հիւանդութեան: Մասնագէտ բժիշներ վիրաբուժական գործողութիւն յանձնարարեցին: Փետրուարի 27ին, Շաբաթ օր, Նորին Ամենապատուութիւնը մտաւ Հայաստ հիւանդանոց եւ յաջորդ օրը ենթարկուեցաւ վիրաբուժական գործողութեան՝ Ֆրոֆէսէօր Շաբինի ծեռքով:

Պատրիարք Սրբազնը չորս օրեր անցուց հիւանդանոց, որոնց ընթացքին Միաբանութեան անդամները, հայ եւ ոտար անձնաորութիւններ այցելեցին իրեն, ներկայացնելու համար ապարինումի մաղթանքներ եւ յայտնելու իրենց ուրախութիւնը գործողութեան յաջող անցած ըլլալուն համար:

Մարտի 3ին, Նորին Ամենապատուութիւնը վերադարձաւ Ս. Աթոռ, ուրախութիւն ապահանելով Միաբանութեան եւ աշակերտութեան:

«Ամիս» այս առթիւ, ի զիմաց Միաբանութեան, կատարեալ ապարինում եւ արեւշատութիւն կը մալթէ իր սիրեցեալ Հոգեւոր Պետին:

ՆՈՐԱՊԱՍՏ. Տ. ԱՂԱՆ ԽՊՍ. ՊԱԼԻԹՈԶԵԱՆ ՄԵՐ ՄԷՋ

Ամսագրիս նախորդ թիւով, Տ. Աղան Ն. Վրդ. Աւստրալիոյ Հայոց Առաջնորդ ընտրուելուն առիթով, մեր չնորհաւորութիւններու հետք «մօտալուտ եպիսկոպոսացում» կը մաղթէինք իրեն: Ուրախ ներ հոս յայտնելու որ մեր այգ մաղթանքը վերածուած է երականութեան: Կիրակի, 14 Փետրուար, Տեառնընդպառազի տօնին, ազգիս Վեհափառ Հայրապետը, Ս. էջմիածնի Մայր Տաճարին մէջ, եպիսկոպոսական ծեռնադրութիւն եւ օծում չնորհած է Հայոց Եկեղեցւոյ պաշտօննեաններէն չորսին: Հայր Աղանէն զատ, «Եկեղեցւոյ իշխանաւորուիք բարձր պաշտօնին կոչուած են Անթիլիասի նախկին Միաբան եւ երկար տարիներ նիւ եորքի շրջանին մէջ պաշտօնավարող Հոգչ. Տ. եղիշէ Ս. Վրդ. Կիդիրեանը եւ Մայր Աթոռի Միաբաններէն Լիոնի (Ֆրանսա) Հայոց Առաջնորդ Հոգչ. Տ. Նորվան Ն. Վրդ. Զաքարեանն ու Իրարի Հայոց նորընտիր Առաջնորդ Հոգչ. Տ. Աւագ Ն. Վրդ. Աստուրեանը:

«Մայր Հայրենիքին Աւստրալիա վերադարձի իր ճամրուն վրայ, Աղան Սրբազն պարտը համարեց այցելութիւն մը տալ իր հոգեւոր տանք: Հասաւ ան երուսաղէմ, Զորեցարթի, 24 Փետրուարի իրիկուան մութիւն: Միաբանութիւն եւ աշակերտութիւն Թափօր կազմած «Հրաշափառով առաջնորդեցին Սրբազնը Եկեղեցւոյ արտաքին գաւթիթէն Մայր Տաճար, ուր Ս. Գիլսագրի մատրան մէջ իր ուխտը կատարելէ ետք անցաւ Եկեղեցւոյ դասը: Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպս. բարի գալուստ մաղթեց իր երբեմնի օգնականին եւ փոխանարդին (յԱւստրալիա), որուն զգածուած շնչտով պար-